



Երկրորդ ընթացում

Կ-350-11.07.2018-ՊԻՄԻ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 92-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն վեց կարճատև և երկու երկարատև տեսակցություն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:



Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի «Դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ» վերտառությամբ 92-րդ հոդվածը կարգավորում է անազատության մեջ գտնվող անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հետ կապված հարաբերությունները, որը կարող է իրականացվել քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվող և անցկացվող կարճատև և երկարատև տեսակցությունների միջոցով: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ դատապարտյալներին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն 1 կարճատև տեսակցություն՝ մինչև 4 ժամ տևողությամբ և երկու ամսվա ընթացքում առնվազն 1 երկարատև տեսակցություն՝ մինչև 3 օր տևողությամբ: Միաժամանակ, հոդվածում նշված կարգավորումներից բացառություն է նախատեսվում առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվող տեսակցությունների դեպքում, այն է՝ տարվա ընթացքում առնվազն երեք կարճատև և մեկ երկարատև տեսակցություն:

Ներկայիս պայմաններում հաշվի չի առնվում առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց կարգավիճակով պայմանավորված առանձնահատկությունները, և ներկայիս իրավակարգավորման շրջանակներում խաթարվում է վերջիններիս կապը ընտանիքի և արտաքին աշխարհի հետ, որը կարող է ուղեկցվել բազմաթիվ հոգեբանական խնդիրներով՝ բարձրացնելով կրկնահանգավորության ռիսկերը, ինչպես նաև ոտնահարելով դատապարտյալի ընտանիքի անդամների, առավելապես երեխաների՝ ծնողների հետ շփման իրավունքը:

Այս առումով հարկ է նկատել, որ դատապարտյալների, այդ թվում՝ առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց, տեսակցության իրավունքը դասվում է նրանց հիմնական իրավունքների շարքին և դրանց իրացման համար նախատեսված պայմանները պետք է հնարավորին չափ թույլ տան դատապարտյալներին պահպանել և զարգացնել ընտանեկան հարաբերությունները, իսկ քրեակատարողական հիմնարկը պարտավոր է աջակցել անազատության մեջ գտնվող անձանց արտաքին աշխարհի հետ կապեր հաստատելու և պահպանելու գործում:

Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից ընդունված Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները նույնպես պարունակում են դրույթներ բանտարկյալների շփումն արտաքին աշխարհի հետ ապահովելու նպատակով: Ստանդարտ կանոնների 37-րդ կետի համաձայն՝ բանտարկյալներին պետք է հնարավորություն տալ ինչպես գրագրության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարք ունեցող ընկերների հետ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 24.1 կետը կարգավորում է բանտարկյալների կապը արտաքին աշխարհի հետ:

«Բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և դրսի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ»: Հիշյալ կանոնների մեկնաբանությունների հանաձայն՝ բանտարկյալները պետք է ունենան հնարավորություն արտաքին աշխարհի հետ կապը պահելու և ցանկացած սահմանափակում, որը կարող է կիրառվել այդ դեպքում պետք է հանգամանորեն մտածված լինի: Ընտանիք տերմինը պետք է դիտարկվել իբրև լայն հասկացություն, որն իր մեջ է ներառում ոչ միայն ընտանիքի իրական անդամներին, այլև անձնաց ում հետ բանտարկյալի մոտ ձևավորվել են նույնքան սերտ հարաբերություններ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 60.4 կետի համաձայն պատիժը չպետք է ներառի ընտանիքի հետ շփման բացարձակ արգելք: Հիշյալ կանոնի մեկնաբանության համաձայն ազատությունից զրկված անձանց պատժախուց տեղափոխելը նրանց չպետք է զրկի ընտանիքի հետ կապ պահպանելու հնարավորությունից: Ավելին, ընտանիքի հետ հաղորդակցվելու ցանկացած սահմանափակում՝ որպես պատժի ձև, պետք է կիրառվի այն դեպքում, երբ նմանատիպ հաղորդակցման ժամանակ խախտում է թույլ տրվել: Այս մոտեցումը բխում է համընդհանուր ճանաչում գտած այն սկզբունքից, համաձայն որի՝ հանցագործություն կատարած անձինք ուղարկվում են քրեակատարողական հիմնարկներ ոչ թե պատժվելու համար, այլև որպես պատիժ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը նախատեսում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, Այս ամենն իր մեջ ներառում է նաև տեսակցությունների իրավունք, ինչը հանդիսանում է շփման կարևորագույն ձևերից մեկը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է պետական մարմինների միջամտությունը այդ

իրավունքի իրացմանը, որի դեպքում պետք է սահմանափակումները հասցվեն նվազագույնի: Միաժամանակ, «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի 24.2 կետի համաձայն՝ հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների և մոնիթորինգի, որն անհրաժեշտ է քրեական գործի քննությունը շարունակելու, կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, հանցագործության կանխարգելման և հանցագործությունից տուժածների պաշտպանության համար, սակայն այդ սահմանափակումները, այդ թվում՝ դատական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները (LABITA v. ITALY)՝ հարկ ենք համարում նշել, որ սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի և համապատասխանեցվեն ռիսկայնության աստիճանին:

«Բանտային վարչակազմերի կողմից ցմահ կամ այլ երկարատև ազատազրկման դատապարտված բանտարկյալների ղեկավարման վերաբերյալ» ԵԽ (2003) 23 հանձնարարականի 22-րդ կետի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ ընդհատված ընտանեկան կապերի պահպանման նպատակով: Հիշյալ նպատակը իրացնելու համար դատապարտյալների նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները և տեսակցությունները պետք է անցկացվեն հնարավորիս չափ հաճախ՝ պահպանելով զաղտնիության սկզբունքը: Եթե նշված պայմանները կարող են հանգեցնել անվտանգության և ապահովության պահպանման անհնարինության կամ եթե առկա է հիմնավորված ռիսկ, ապա նշված շփումները կարող են զուգորդվել համապատասխան միջոցառումներով, ինչպես օրինակ գրագրության ստուգում և տեսակցություններից առաջ կամ հետո իրականացվող ստուգումներ: Մասնավորապես, հիշյալ հանձնարարականի 22-րդ կետի համաձայն՝ պետք է ապահովվի դատապարտյալների խզված ընտանեկան կապերի վերականգնումը, այդ իսկ պատճառով դատապարտյալները պետք է պահվեն իրենց ընտանիքի անդամների բնակության վայրին առավել մոտ քրեակատարողական հիմնարկներում:

«Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված անձանց և երկարաժամկետ ազատազրկման դատապարտված այլ անձանց պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» ԵԽ (2003) 23 առաջարկության համաձայն ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տեղավորելը պետք է լինի ոչ թե նրանց ազատազրկման, այլ ռիսկերի և կարիքների համապարփակ ու շարունակական գնահատման արդյունք՝ հիմք ընդունելով անհատականացված պատիժը կրելու պլանը: Ուստի պետք է վերանայել այն մոտեցումը, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձը վտանգավոր է:

Տեսակցությունների վերահսկելիության վերաբերյալ Գերմանիայի «Ազատազրկման հետ կապված պատիժ կրող դատապարտյալների հետ վերականգնողական և կանխարգելման միջոցառումների իրականացման մասին» օրենքով առաջարկվող իրավակարգավորումը նախատեսում է, որ տեսակցությունները կարող են վերահսկվել, եթե տվյալ տեսակցությունը կարող է սպառնալ ուղղիչ

հիմնարկում կարգուկանոնի և անվտանգության հարցերին, բացառությամբ այն դեպքերի, եթե կոնկրետ դեպքերում առկա է տեղեկատվություն, որ նման վտանգը բացակայում է: Տեսակցությունը կարող է դադարեցվել անմիջապես, եթե խախտվում են վերոհիշյալ օրենքի դրույթները:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ դատապարտյալների տեսակցության իրավունքը ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք սահմանված են ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածով, ըստ որի՝ համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողի հետ շփումը երեխայի շահերին դեմ է:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) իր 2-րդ ընդհանուր հաշվետվության մեջ կարևորել է ազատությունից զրկված անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապը, որի ապահովման նպատակով նրանց պետք է տրամադրվեն իրենց մերձավոր ազգականների հետ հարաբերությունները պահպանելու ողջամիտ հնարավորություններ: Ուղղորդող սկզբունքը պետք է լինի արտաքին աշխարհի հետ կապը խթանելը, իսկ այդպիսի շփման սահմանափակումները պետք է հիմնված լինեն միայն բացառիկ բնույթի անվտանգության նկատառումների վրա:

ԽԿԿ-ի պատվիրակությունը Հայաստան կատարած այցի վերաբերյալ իր CPT (2010) 82 զեկույցում առաջարկել է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ընձեռվի հնարավորություն իրականացնելու Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներն այնպես, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձիք քրեակատարողական հիմնարկում պահվող մյուս անձանց հետ հավասար պայմաններով օգտվեն տեսակցության հնարավորությունից:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Նախագծի կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով՝ առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվելու է տարվա ընթացքում առնվազն վեց կարճատև և երկու երկարատև տեսակցության իրավունք, որի նպատակն է քրեական պատիժների ոլորտում վերականգնողական արդարադատության սկզբունքի ներդրումն ու պատժի նպատակների արդյունավետ իրացումը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կ-350-11.07.2018-ՊԻՄԻ-011/1 օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹ ՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹ ՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	-	-	Դիտողություններ և առաջարկություններ չկան	-	-